

TELCELL

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի
2025 թ. 3-րդ
եռամսյակի
հաշվետվություն

14.11.25

Բովանդակություն

■	<u>Կառավարման մարմինների միջանկյալ գեկույց</u>	
■	<u>Կորպորատիվ իրադարձություններ</u>	<u>3</u>
■	<u>Տերմինալային ցանցի զարգացում</u>	<u>4</u>
■	<u>Բջջային հավելվածի զարգացում</u>	<u>6</u>
■	<u>Կադրային քաղաքականությունը</u>	<u>11</u>
■	<u>Ֆինանսական վերլուծություն</u>	<u>13</u>
■	<u>Ռիսկեր և անորոշություններ</u>	<u>18</u>
■	<u>Ռազմավարությունը և զարգացման միտումները</u>	<u>19</u>
■	<u>ՀՀՄՍ հաշվետվություն</u>	<u>21</u>
■	<u>Պատասխանատու անձանց հայտարարությունը</u>	<u>27</u>

Կարևոր իրադարձությունների Նկարագիր

1. Կորպորատիվ իրադարձություններ

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի՝ Աշխատակիցների բաժնետիրացման ծրագրի (ESOP) շրջանակում տեղաբաշխված բաժնետոմսերի ցուցակման հայտը Ֆոնդային բորսայում

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ն 29.07.2025 թվականին ցուցակման հայտ է ներկայացրել «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ բաժնետոմսերի երկրորդային (B) ցուցակում աշխատակիցների բաժնետիրացման արդյունքում տեղաբաշխված 220,000 հատ սովորական (հասարակ) բաժնետոմսերը ցուցակելու համար՝ հիմք ընդունելով 30.04.2025 թվականի խորհրդի որոշումը վերոնշյալ 220,000 հատ սովորական (հասարակ) բաժնետոմսերը «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի բաժնետոմսերի երկրորդային (B) ցուցակում ցուցակելու համար հայտ ներկայացնելու և նշված արժեթղթերի ցուցակման համաձայնագիր կնքելու մասին:

Նոր վարչակազմակերպական կառուցվածքը հաստատելու մասին

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի խորհրդի 26.09.2025 թվականի թիվ 260925 արձանագրային որոշմամբ հաստատվել է Ընկերության նոր վարչակազմակերպական կառուցվածքը: Համաձայն նույն որոշման՝ մինչ այժմ գործող կառուցվածքը կճանաչվի ուժը կորցրած, իսկ նոր վարչակազմակերպական կառուցվածքն ուժի մեջ կմտնի 2025 թվականի դեկտեմբերի 1-ից (01.12.2025թ.):

2. Տերմինալային ցանցի զարգացում

2025 թվականի երրորդ եռամսյակում Ընկերությունը շարունակել է ներդնել նորարարական լուծումներ և զարգացնել իր ծառայությունները՝ նպատակ ունենալով բարձրացնել օգտատերերի թիվը, ապահովել տեխնոլոգիական առաջընթաց և ընդլայնել մատուցվող ծառայությունների շրջանակը:

Շարունակական բարելավում.


2025 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում Telcell վճարային համակարգին միացվել են ավելի քան 26 նոր ծառայություններ մատուցողներ, որոնց օգտին հնարավոր է վճարումներ կատարել Տերմինալների միջոցով, իսկ դրանցից 13-ի օգտին՝ նաև Telcell Wallet-ի միջոցով: Դա զգալիորեն ընդլայնել է Telcell համակարգում հասանելի ծառայությունների շրջանակը: Նոր ծառայությունների միջոցով կատարված գործարքների թիվը եռամսյակի ընթացքում կազմում է շուրջ 32,027 վճարում՝ շուրջ 310,557,678 ՀՀ դրամի չափով:

Ժամանակահատվածի հիմնական ռազմավարական հենքերից մեկը եղել է հավաքագրման գործընթացի թիրախավորումը դեպի առողջապահական ոլորտ: Այս նպատակային աշխատանքի արդյունքում նոր միացված գործընկերներից 12-ը բժշկական կենտրոններ և կլինիկաներ են, ինչը նպաստել է մեր տերմինալային ցանցի միջոցով մշակված գործարքների ընդհանուր ծավալի կայուն աճին:

Գործընկերային ցանցի ընդլայնում

■ Տերմինալային բիզնեսի զարգացումը.

1. 5029 տերմինալ,
2. երրորդ եռամսյակի ընթացքում ավելացել է 159 տերմինալ,
3. գյուղերում տեղադրված տերմինալների քանակը՝ 1185,
4. մարզերում տեղաբաշխված է Ընկերության տերմինալային ցանցի 54%-ը:



3. Բջջային հավելվածի զարգացում

Օգտատերերի Բազա.

- Նոր նույնականացված հաճախորդներ՝ 12,346 նոր նույնականացված օգտատեր:
- Telcell Wallet-ի միջոցով բացված բանկային հաշիվների/քարտերի ընդհանուր թիվը եռամսյակում.
 - Բացված հաշիվներ՝ ընդհանուր առմամբ բացվել է 14,400 բանկային հաշիվ,
 - թվային քարտեր՝ թողարկվել է մոտ 5500 Visa թվային քարտ:
- Նոր մերձանտների և էլեկտրոնային առևտրի գործընկերների թիվն ավելացել է 60-ով: Նրանք ներկայացնում են տարբեր ոլորտներ՝ Horeca, Առողջություն, Գեղեցկություն, Էլեկտրոնիկա, Ծառայություններ, Տուև և այգի, Սուպերմարկետներ:

Փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) հետ համագործակցությունը

Ընկերությունը շարունակում է ընդլայնել իր գործընկերների ցանցը՝ աջակցելով փոքր ու միջին բիզնեսներին և իրենց մատուցած ծառայությունների դիմաց վճարումներն ընդունելով Telcell վճարային համակարգի միջոցով:

- Telcell համակարգերի միջոցով վճարումներ իրականացնող ՓՄՁ-ներ.
 - **QR գործիքով էլեկտրոնային փողով վճարումներ:** Ավելի քան 4500 ՓՄՁ:
 - **E-Commerce հարթակներում էլեկտրոնային փողով վճարումներ** (Կայք/հավելված): Ավելի քան 600 օնլայն հարթակով ծառայություն մատուցող ՓՄՁ:
 - **Telcell համակարգով** (Telcell Wallet-ում) վճարումների ընդունում: Ավելի քան 650 ծառայությունների համար:

Հաշվետու ժամանակահատվածում Telcell համակարգերին միացած նոր ծառայություններ մատուցողների քանակը:

- **QR գործիքով էլեկտրոնային փողով վճարումներ:** 50 նոր ՓՄՁ (որից 24-ը՝ BNPL «Գնի՛ր հիմա, վճարի՛ր հետո» ծառայությամբ):
- **QR գործիքով էլեկտրոնային փողով վճարումներ:** 2 այնպիսի մեծ ցանցերում, ինչպիսիք են՝ Yerevan City և Կակտուս սուպերմարկետները:
- **E-Commerce հարթակներում էլեկտրոնային փողով վճարումներ** (Կայք/հավելված): 10 նոր ՓՄՁ:
- **Telcell համակարգով** (Telcell Wallet-ում): Գրեթե 20 նոր ծառայություններ մատուցողներ:
- **Power Bank կայաններ:** 170 նոր տեղադրված կայան, որոնց օգտին վճարումներն ընդունվում են Telcell Wallet-ով:

որոնցից մարզերում.

- **QR գործիքով էլեկտրոնային փողով վճարումներ:** 10 նոր ՓՄՁ:
- **Power Bank կայաններ:** 72 նոր տեղադրված կայան:

Օգտատերերի աճ

Նոր ներդրված ծառայությունները նպաստել են օգտատերերի ներգրավմանը և ակտիվության բարձրացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում, ակտիվ օգտատերերի թիվը միջինում կազմել է 214,000 օգտատեր: Այս տվյալը ցույց է տալիս, որ Ընկերության կողմից իրականացված ներդրումներն ու գործընկերային ծրագրերը արդյունավետ են և ուղղված են հաճախորդների փորձի բարելավմանն ու թվային էկոհամակարգի ընդլայնմանը:

Առաջարկելով բացառիկ լուծումներ, ինչպիսիք են տրանսպորտի ծառայություններ, էլեկտրական մարտկոցների վարձույթ և տարբեր միջոցառումների տոմսեր, մենք ուժեղացնում ենք մեր մրցունակությունը և ստեղծում այնպիսի փորձառություններ, որոնք օգտատերերը չեն կարող գտնել այլ հավելվածներում:

Տրանսպորտային համակարգի շրջանակներում իրականացվող բարելավումներ

- Տրանսպորտային քարտի վրա մեկանգամյա ուղետոմսի լիցքավորում – թղթային QR շրջանառությունից դուրս բերելու այլընտրանք:
- Cashback «Փաթեթ» – գործում է քեշբեք 1500 ՀՀ դրամ արժողությամբ ուղետոմսի համար:
- Ուղետոմսերի քանակի ընտրություն լիցքավորման ժամանակ – տրանսպորտային քարտի լիցքավորման ընթացքում որոշ ուղետոմսերի համար ավելացվել է քանակի ընտրության հնարավորություն, թե՛ տերմինալում, թե՛ դրամապանակում:
- Բազմասարքային մուտք – ավելացվել է ֆունկցիոնալ, ըստ որի՝ եթե նույն դրամապանակով մուտք են գործել մի քանի սարքում, ապա ուղետոմսը կապվում է վերջին ակտիվ սարքին:
- Տերմինալից դեպի դրամապանակ – ուղետոմսը կարելի է գնել տերմինալից, և այն ավտոմատ արտացոլվում է այն դրամապանակում, որի համարը մուտքագրվել է տերմինալի վրա (թղթային QR շրջանառությունից դուրս բերելու այլընտրանք): Շուտով հնարավոր կլինի նաև գնել բոլոր տեսակի փաթեթներ և ուղարկել դրանք այլ դրամապանակների:
- Տրանսպորտային քարտի վրա մեկանգամյա ուղետոմսի լիցքավորում – թղթային QR շրջանառությունից դուրս բերելու այլընտրանք:
- Թեստավորման փուլում գտնվող բարելավումներ:
- Միասնական QR ներդրում – ուղևորը նախ օգտվում է տրանսպորտային միջոցից, ապա կատարում է վճարումը երթի համար:
- Նախատեսվում է բացել դրամապանակում ուղետոմսի դիմաց վճարման հնարավորությունը՝ այլ դրամապանակին ուղարկելու հնարավորությամբ:
- Երևանի քաղաքապետարանի ավագանու որոշմամբ սույն թվականի օգոստոսի 1-ից շրջանառությունից դուրս են եկել թղթային QR ուղետոմսերը:

Visa թվային քարտից կանխիկացման հնարավորության գործարկում

Իրական միջավայրում է Visa թվային քարտի համար PIN ծածկագրի ստեղծումը, որը հնարավորություն է տալիս օգտատերերին կանխիկացում կատարել ցանկացած ATM-ից:

Ծառայությունների խթանման ակցիաներ

I. Telcell-ի 18 ամյակին նվիրված ակցիայի կազմակերպում

- «6 x iPhone 16 TW օգտատերերի համար» գովազդային վիճակախաղ և ակցիա.

Telcell Wallet-ի մի շարք առանցքային ծառայությունների (մասնավորապես՝ միջազգային փոխանցումներ, վարկերի ստացում, նպատակային վճարումներ) խթանման նպատակով անցկացվել է համակցված ակցիա և վիճակախաղ: Ընդհանուր մրցանակային ֆոնդը կազմել է 6 Apple iPhone 16 սմարթֆոն, որոնք տրամադրվել են սահմանված կատեգորիաներում առավելագույն գործարքներ կատարած և պատահականության սկզբունքով ընտրված օգտատերերին:

- 18 ամենափին և ակտիվ օգտատերերին նվերներ

Կազմակերպվել է հատուկ հանդիպում-հյուրասիրություն, որը տեղի է ունեցել ընկերության գլխամասային գրասենյակում, իրավիրվել են Telcell-ի 18 ամենափին (ամենավաղեմի) օգտատերերը: Հանդիպումն անցկացվել է գլխավոր տնօրեն Արտյոմ Ղազարյանի հետ ոչ պաշտոնական մթնոլորտում: Բոլոր մասնակիցներին, ի նշան երկարամյա վստահության և գնահատանքի, հանձնվել են հուշանվերներ:

- «Aram MP3 at Hover Gardens» համերգի տոմսերի գովազդային վիճակախաղ

Ընկերության պաշտոնական Տեղեգրամյան ալիքի հետևորդների բազայի ընդլայնման և Telcell Visa Digital թվային քարտերի օգտագործումը խթանելու նպատակով անցկացվել է գովազդային վիճակախաղ: Մասնակցության համար անհրաժեշտ էր լինել ալիքի հետևորդ և ակցիայի ընթացքում պատվիրել նոր թվային քարտ: Ակցիան ներառում էր ինչպես երաշխավորված նվերներ՝ 5000 «BON» միավոր, իսկ հիմնական մրցանակային ֆոնդը՝ 4 «Aram MP3 at Hover Gardens» համերգի տոմս:

II. «Թղթային ուղետոմսերը դուրս են եկել շրջանառությունից» իրազեկման արշավ

Երևանի քաղաքապետարանի որոշմամբ՝ օգոստոսի 1-ից թղթային QR տոմսերը փոխարինվել են էլեկտրոնային այլընտրանքով: Telcell-ը մեկնարկել է իրազեկման արշավ՝ առաջարկելով ուղետոմսեր ձեռք բերել Telcell Terminal-ներից և օգտագործել Telcell Wallet-ում: Առանցքային է, որ ծառայությունը նույնականացում չի պահանջում՝ դառնալով հասանելի բոլորի համար:

III. «Կորիզ կրթական ծրագիր» ՓԲԸ-ի հետ համատեղ «Koreez 2025 մաթեմատիկական մրցույթի» ամփոփում

Այս համագործակցության շնորհիվ բազմաթիվ դպրոցականներ և ուսանողներ մասնակցեցին մրցույթներին, ստացան նոր գիտելիքներ ու ևս մեկ անգամ համոզվեցին, որ կրթությունը նոր հնարավորություններ է ստեղծում:

IV. «1=4» ակցիայի անցկացում

Առաջին անգամ Telcell Wallet-ով ուղետոմս գնած օգտատերերին ևս 3 անվճար տոմսի տրամադրում:

V. «Գարիկ և Սոնա» համերգի տոմսերի խաղարկության անցկացում տելեգրամում

Տելեգրամյան ալիքի բազան ընդլայնելու և Telcell Visa Digital քարտերի օգտագործումը խթանելու նպատակով անցկացվեց վիճակախաղ: Ալիքին հետևելու և նոր թվային քարտ պատվիրելու դեպքում մասնակիցները երաշխավորված ստանում էին 5000 «BON» միավոր, հիմնական մրցանակը՝ «Գարիկ և Սոնա» համերգի 4 տոմս:

VI. SummerFest միջոցառման տոմսերի խաղարկություն

Telcell Visa Digital քարտերի օգտագործումը խթանելու նպատակով անցկացվել է գովազդային վիճակախաղ: Մասնակցության համար անհրաժեշտ էր ակցիայի ընթացքում պատվիրել նոր թվային քարտ:

VII. SummerFest միջոցառման ժամանակ խաղարկության կազմակերպում Telcell տաղավարում

Telcell Wallet-ի օգտագործումը խթանելու նպատակով Telcell տաղավարում անցկացվել է գովազդային վիճակախաղեր: Վիճակախաղ 1-ին մասնակցության համար անհրաժեշտ էր ունենալ Telcell Visa Digital քարտ, իսկ Վիճակախաղ 2-ի համար անհրաժեշտ էր միայն Telcell Wallet-ի օգտատեր լինել:

4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընկերության կորպորատիվ կառավարման համակարգի կատարելագործման շրջանակում առաջնային տեղ է հատկացվում արդյունավետ կադրային քաղաքականության վարմանը: Այն ուղղված է անձնակազմի կառավարման արդյունավետ համակարգի ստեղծմանը, որն ապահովում է Ընկերության ռազմավարական նպատակների իրագործումը:

Կադրային քաղաքականությունը հիմնված է հետևյալ սկզբունքների վրա.

- Արդարություն և հավասար հնարավորություններ. աշխատակիցները պետք է ունենան հավասար իրավունքներ ու հնարավորություններ՝ անկախ սեռից, ազգությունից, կրոնից կամ այլ անհատական հատկանիշներից:
- Մասնագիտական զարգացում. ստեղծվում են պայմաններ շարունակական ուսուցման և կարիերայի առաջխաղացման համար:
- Թափանցիկություն և բաց գործընթացներ. կադրային քաղաքականությունն իրականացվում է պարզ ու կանխատեսելի մեխանիզմներով:
- Մոտիվացիայի և վարձատրության արդար համակարգ. վարձատրությունն ու խրախուսման մեխանիզմները համահունչ են աշխատակցի ներդրմանը և ցույց տված արդյունքներին:
- Բարենպաստ աշխատանքային միջավայր. խթանվում է թիմային աշխատանքը, վստահության և փոխադարձ հարգանքի մշակույթը:


Սույն հաշվետվությունն ամփոփում է 2025 թվականի երկրորդ եռամսյակում Ընկերության աշխատակազմի կառուցվածքի, շարժի և մասնագիտական զարգացման վերաբերյալ հիմնական տվյալները:

Աշխատակազմի կառավարումը և մասնագիտական զարգացումը շարունակել են մնալ Ընկերության կարևորագույն ուղղություններից մեկը

- Աշխատակիցների ընդհանուր թիվը.
 - 2025 թ.-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ՝ 390
 - 2025 թ.-ի հունիսի 30-ի դրությամբ՝ 388
- Աշխատակազմի համալրում.
 - Երրորդ եռամսյակում ընդունվել է 18 նոր աշխատակից:
- Թվային և տեխնիկական աշխատակիցների քանակը՝ նոր կամ վերապատրաստված.
 - սեպտեմբերի 30-ի դրությամբ՝ 2

Գեներալի կազմ և հավասարություն

- Ընդհանուր կազմ.
 - 47% կանայք և 53% տղամարդիկ
- Կանայք ղեկավար և տեխնիկական պաշտոններում.
 - 23%



Մասնագիտական զարգացում և վերապատրաստումներ

Ընկերությունը շարունակաբար ներդրումներ է կատարում աշխատակիցների հմտությունների բարձրացման համար:

- Վերապատրաստման մասնակիցները՝ 1 աշխատակից:
- Ուղղվածություն՝ Կորպորատիվ քարտուղարի դերը ՀՀ ԿԿ կանոնագրի ներդրման հարցում:

Ֆինանսական վերլուծություն և էական փոփոխություններ

Հիմնական ցուցանիշներ

Ֆինանսական կայունություն և օպտիմիզացիա

2025 թվականի ռազմավարությանը համահունչ՝ Ընկերությունը շարունակում է իրականացնել օպտիմիզացիոն գործընթացներ՝ ուղղված շահութաբերության բարձրացմանն ու ռեսուրսների առավել արդյունավետ կառավարմանը: Վերոնշյալին զուգընթաց Ընկերությունը ակտիվորեն շարունակում է զարգացնել նոր ուղղություններ՝ թե՛ տերմինալային և թե՛ բջջային հավելվածի հարթակներում:

Ընկերության հատկանշական ցուցանիշներից է երրորդ եռամսյակում տերմինալային բիզնեսի զարգացումը: Համաձայն ՀՀ ԿԲ վիճակագրական վերջին ցուցանիշների՝ Վճարային կազմակերպությունների տերմինալների քանակը հասել է 10,773 հատի, որոնցից 53%՝ մարզերում: 3-րդ եռամսյակում Ընկերությունը տերմինալային ցանցը ավելացրել է 159 հատով (տես՝ էջ 5)՝ ՀՀ-ում ընդհանուր ոլորտի զարգացումների համահունչ: Ընկերությունը զբաղեցնում է տերմինալային շուկայի գրեթե 47%, որից 54%՝ ՀՀ մարզերում:

Հավելենք, որ 3-րդ եռամսյակում մեր սեփական տերմինալային ցանցում շրջանառության աճը կազմել է 9.7%, մինչդեռ ընդհանուր աճը կազմել է 5.6%: Այն փաստը, որ շրջանառության աճը ավելի մեծ տեմպ ունի, քան քանակային աճը, փաստում է ավելի գրագետ տոպոլոգիայի ուսումնասիրման և կիրառման վերաբերյալ:

Ընկերության զարգացման այլ ուղղությունները

Ընկերությունը շարունակում է զարգացնել թե՛ քանակային ցուցանիշները և թե՛ ծավալային՝ այդ թվում նաև օպերատորական ցանցի ընդլայնման հաշվին:

Համագործակցելով նոր գործընկերների հետ՝ թե՛ տերմինալներով և թե՛ բջջային հավելվածով, 3-րդ եռամսյակում Ընկերությունը լրացուցիչ 300 մլն-ից ավել շրջանառություն է ունեցել մոտ 26 նոր գործընկերների հետ, որը իր հերթին աճի միտում կունենա հաջորդ ամիսներին:

Թե՛ ծավալային, և թե՛ քանակային ցուցանիշների աճը՝ նպաստել են, որ պետական լրացուցիչ վճարների և տուրքերի աճի, ինչպես նաև մրցակցային խստացող պայմաններում՝ 3-րդ եռամսյակում ընկերությունը շարունակում է ապահովել միջինում 100 մլն ամսական զուտ եկամուտին մոտ ցուցանիշ:

Եկամուտների և ծախսերի վերլուծություն

Հասույթը երրորդ եռամսյակում կազմել է 2.6 մլրդ դրամ, ինչը 68 մլն-ով (3%) ավել է երկրորդ եռամսյակի համեմատ: Այլ ուղղություններով եկամուտը նույնպես աճել է՝ ապահովելով 3-րդ եռամսյակում հավելյալ 402 մլն դրամ, որը իր հերթին նույնպես գերազանցել է երկրորդ եռամսյակի ցուցանիշները 7.5 մլն դրամով:

Ընկերությունը շարունակաբար աշխատում է նորանոր բարձրակարգ կադրեր ներգրավել, մինչդեռ մրցակցային շուկայի պահանջներից է նաև գրագետ օպտիմիզացիոն ծախսերը: Հաշվի առնելով վերոնշյալը՝ ակնառու դրական է Անձնակազմի գծով ծախսի գրագետ կառավարումը, որը երկրորդ եռամսյակի համեմատ նվազել է 7 տոկոսով՝ հասնելով ամսական միջինում 215 մլն դրամի:

Առանձնահատուկ ընդգծման արժանի խնայողությունից է նաև ինկասացիոն ծառայությունների նվազումը ավելի գրագետ ինկասացիոն գծերի կառավարման հաշվին՝ հասցնելով միջինում ամսական 55.2 մլն դրամի ծախսը, թեև երկրորդ եռամսյակում միջինը կազմում էր մոտ 63.6 մլն դրամ:

Բանկային ծառայությունների մասով նույնպես երրորդ եռամսյակում ծախսը նվազել է 19 տոկոսով, սակայն հիմնական պատճառը երկրորդ եռամսյակում չնախատեսված աճի արդյունքում, առաջին եռամսյակի աճին համընթաց:

33 մլն դրամով աճել է գործակալներին վճարվելիք միջնորդավճարները, որը կազմում է ընդհանուր եռամսյակի ծախսի մեջ 3.9 տոկոս: Տվյալ ծախսը աճել է շրջանառության աճին զուգընթաց, որպես բնականոն բիզնեսի զարգացման հետևանք:

Չգալի են աճել ծախսային հոդվածներից միայն Գովազդի գծով ծախսերը և Թույլատվության և պետական տուրքերի գծով ծախսերը: Գովազդի ծախսի աճը պայմանավորված է սեզոնայնությամբ, ուստի հասել է միջինում ամսական 50 մլն դրամի:

Թույլատվության վճարները նույնպես հասել են միջինում ամսական 51.8 մլն-ի, որը 10 մլն-ով ավել է երկրորդ եռամսյակի միջին ցուցանիշներին:

Որպես հետևանք վերոնշյալների՝ զուտ եկամուտը երրորդ եռամսյակում 311 մլն-ից ավել է կուտակվել՝ հասցնելով տարվա արդեն իսկ գումարային 851 մլն դրամը գերազանցող ցուցանիշի:

* Այս հաշվետվության մեջ գնահատականները և համեմատականները արված են աուդիտ չանցած հաշվետվությունների հիման վրա, և կիրառված են որոշ ցուցանիշների կլորացումներ, ուստի գումարելիս կարող են հավասար չլինել միասնական ցուցանիշին:

Ակտիվների և պասիվների վերլուծություն

Ստորև ներկայացված է ակտիվների աղյուսակը (ավելի մանրամասն \$ՀՄՍ հաշվետվությունը՝ հաջորդ գլխում)։

Հազար ՀՀ դրամ	30.06.25	30.09.25	Աճ
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	1,277,227	1,383,400	106,173
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	2,435,877	2,454,715	18,838
Ընդամենը	3,713,104	3,838,115	125,011
Ընթացիկ ակտիվներ			
Այլ ընթացիկ ակտիվներ	589,489	489,121	(100,368)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	1,318,656	1,384,548	65,892
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	4,787,818	4,944,549	156,731
Օգտագործման սահմանափակումով հաշիվներ	4,926,409	4,548,098	(378,311)
Ընդամենը	11,622,372	11,366,316	(256,056)
Ընդամենն ակտիվներ	15,335,476	15,204,431	(131,045)

2-րդ եռամսյակի համեմատ ակտիվները նվազել են ընդհանուր առմամբ 131 մլն դրամով հիմնականում պաշարների՝ 93 մլն դրամի նվազման զուգընթաց 106 մլն-ով հիմնական միջոցների աճով։

Տվյալ գնումները միտված են նախագծերի զարգացմանն ու ընդլայնմանը։ Այլ հիմնական էական փոփոխությունը եղել է դրամական միջոցների 221 մլն դրամով պակասելը (կամ 2.3%)։ Հիմնական պատճառը՝ մյուս էջում։

Ցպահանջ հաշիվների վրա ազատ դրամական միջոցները ապահովում են ԿԲ-ի կողմից սահմանված նորմատիվների պահանջը։ Այդքանով հանդերձ, Ընկերությունը, գրագետ համագործակցելով Բանկերի հետ, գեներացնում է լրացուցիչ եկամուտ ներդրումային գործունեությունից։

Ակտիվների և պասիվների վերլուծություն

Ակտիվների 221 մլն նվազմանը զուգընթաց նաև պասիվներում եղել են համապատասխան փոփոխությունները.

- 406 մլն դրամով նվազել է վարկերի և փոխառությունների հաշիվը՝ զգալիորեն թեթևացնելով կազմակերպության բեռը,
- 47.7 մլն-ով նվազել է նաև կրեդիտորական պարտքերը,
- մինչդեռ 303 մլն-ով աճել է չբաշխված շահույթը:


Մնացած տարբերությունը էականության տեսանկյունից՝ 65.8 մլն-ով ակտիվներում դեբիտորական պարտքերի դրական աճն է:

Ստորև ներկայացված է պարտավորությունների աղյուսակը.


Հազար ՀՀ դրամ	30.06.25	30.09.25	Աճ
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	1,475,069	1,068,730	(406,339)
Վարձակալության գծով պարտավորություն	148,650	148,650	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	162,550	114,843	(47,707)
Ընդամենը	1,786,269	1,332,223	(454,046)
Ընթացիկ պարտավորություններ			
Վարձակալության գծով պարտավորություն	53,976	37,920	(16,056)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	8,896,549	8,876,837	(19,712)
Ընթացիկ հարկային պարտավորություններ	73,200	120,484	47,284
Ընդամենը	9,023,725	9,035,241	11,516
Ընդամենը պարտավորություններ	10,809,994	10,367,464	(442,530)

Փոփոխություններ սեփական կապիտալում

3-րդ եռամսյակի ընթացքում Ընկերությունը կուտակել է ևս 310 մլն-ից ավել զուտ եկամուտ՝ չբաշխված զուտ շահույթը անցնելով 2 մլրդ-ի դրամի շեմը: 3-րդ եռամսյակում դիվիդենդի մասնակի տեղաբաշխումներ չի եղել՝ հասցնելով Ընդհանուր Կապիտալը 4,8 մլրդ-ի:



Կապիտալի բաշխվածությունը ըստ հոդվածների՝ ստորև.



Ռիսկերի բացահայտում

Մարքեթինգային և հաղորդակցական գործողություններ

Տրանսպորտային նախագծի շրջանակներում իրականացվել են տեղեկատվական, ուսուցողական և բացատրական բնույթի բազմաթիվ նյութերի հրապարակումներ, որոնք էականորեն զսպել են նոր համակարգից օգտվողների ռիսկերը: Կատարվել են բացատրական հրապարակումներ նախագծում ընկերության դերի, գործառույթների և պատասխանատվության շրջանակների վերաբերյալ: Այդ հրապարակումները հստակեցրել են հասարակության պատկերացումները «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի մասին:

Բիզնես շարունակականություն

Հաշվի առնելով ընկերության գործունեության ոլորտային բնույթը և կապը ֆինանսական շուկայի այլ մասնակիցների հետ՝ ընկերության կողմից մատուցվող ծառայությունների անընդհատությունը կախված է ոչ միայն ներքին համակարգերից, այլև արտաքին գործընկերների՝ բանկերի, վճարահաշվարկային օպերատորների, կապի և տեխնոլոգիական մատակարարների հուսալիությունից: Նրանց մոտ առաջացած խափանումները կամ ծառայությունների դադարեցումները կարող են անմիջապես ազդել գործարքների կատարման և հարթակի հասանելիության վրա: Դրանով իսկ առաջանում է արտաքին ռիսկ, որը զսպելու նպատակով ընկերությունը ձեռնարկում է բավարար միջոցներ, սակայն որոշ դեպքերում ֆինանսական շուկայի կառուցվածքը թույլ չի տալիս ամբողջությամբ կառավարել ռիսկը:

Փողերի լվացման և համապատասխանության

Հաշվի առնելով, որ ընկերության հիմնական ծառայությունները մատուցվում են հաճախորդների հեռակա նույնականացման միջոցով, ուստի փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսանսավորման դեմ պայքարի համատեքստում հիմնակ ռիսկը շարունակում է մնալ իրական շահառուի և կեղծ նույնականացման ռիսկը (KYC ռիսկեր):

Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսանսավորման դեմ պայքարի ներհատուկ ռիսկերը պահանջում են շարունակաբար բարելավվել և ներդնել գործարքների մշտադիտարկման, կասկածելի գործարքների հայտնաբերման և հաճախորդների պատշաճ նույնականացման արդյունավետ ընթացակարգեր:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՌԱԳՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄԱՅԱԿԻ ԽԱՄԱՐ

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԻԽՄՆԱԿԱՆ ՌԱԳՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ Է.

- ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ շահութաբերության աճ
- Telcell Wallet հավելվածի օգտատերերի քանակի պահպանում և աճ
- Telcell Էկոհամակարգի միջոցով վճարումների ծավալի աճ
- Թիմի աշխատանքի օպտիմալացում և արդյունավետության բարձրացում
- Ծախսերի արդյունավետության բարձրացում

Վերոնշյալ ռազմավարական նպատակներին հասնելու խամար 2025 թվականի 4-րդ եռամսյակում ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, հաշվի առնելով ակտուալ փոփոխությունները, ընդգծում է զարգացման հետևյալ իխմական ուղղությունները.

1. Բիզնես ուղղվածության գործողություններ

- Տրանսպորտային համակարգի շրջանակներում Telcell Wallet հավելվածի միջոցով օգտագործման առավել հարմար տարբերակների ներդրում:
- Գործընկեր բանկերի վարկային պրոդուկտների տրամադրման հնարավորություն Telcell Wallet հավելվածի միջոցով:
- Նոր CRM համակարգի ներդրման գործընթացի ավարտում:
- Cash Out` բիզնեսի նոր ուղղության ծրագրային գործարկում:
- Հաճախորդների նույնականացման համակարգի ներդրման գործընթացի ներդրում, այդ թվում գործընկեր կազմակերպությունների գործիքակազմի կիրառմամբ և այդ հնարավորության տրամադրում բանկերին:
- Տերմինալային ցանցի օպտիմալացում` ըստ եկամտաբերության:
- Ծառայությունների մատուցման նոր սակագնային քաղաքականության մշակում:

2. Մարքեթինգային և հաղորդակցական գործողություններ

- Նոր CRM համակարգի կիրառմամբ առավել արդյունավետ մարքեթինգային արշավների իրականացում:
- Նոր մարքեթինգային մասշտաբային արշավների իրականացում և մասնակցություն հեղինակավոր միջոցառումներում:
- Ընկերության ընկալման, իմիջի ու դիրքավորման փոխակերպում որպես ունիվերսալ և ճկուն ֆինանսական Էկոհամակարգ:
- Էկոհամակարգի ծառայությունների, հնարավորությունների և աշխատանքային սկզբունքների մասին տեղեկացվածության մակարդակի բարձրացում:

3. Կազմակերպական գործողություններ

- Ծախսերի օպտիմալացում և ծախսերի գնահատման ներդրված մեխանիզմների կիրառում ու արդյունքների գնահատում:
- Աշխատակազմի գնահատման մեխանիզմի ներդրում և նոր մոտիվացիոն համակարգի ձևավորում 2026 թ. մեկնարկից կիրառելու նպատակով:
- Տեղեկատվական անվտանգության գերժամանակակից համակարգերի ներդրման գործընթացի 2025 թ. համար նախատեսված գործողությունների ամփոփում:
- Բիզնեսի նոր մարտահրավերներին, Էկոհամակարգային մոդելի տրամաբանության և պահանջներին համապատասխան կադրային և կառուցվածքային վերադասավորումների իրականացում:

ՖՀՄՍ համախմբված հաշվետվություն

1. Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	31.12.24	30.09.25
Ակտիվներ		
Հիմնական միջոցներ	1,221,001	1,383,400
Ոչ նյութական ակտիվներ	578,911	696,389
Գույքի	1,157,700	1,157,700
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	201,408	139,981
Կանխավճարներ	81,881	34,688
Տրամադրված փոխառություններ	241,244	340,100
Հետաձգված հարկային ակտիվներ	85,857	85,857
Ոչ ընթացիկ ակտիվներ	3,568,002	3,838,115
Պաշարներ	343,947	296,057
Տրամադրված փոխառություններ	45,329	40,763
Ավանդներ բանկում	155,326	152,301
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	1,446,408	1,384,548
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	7,915,646	4,944,549
Օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդներ	4,337,560	4,548,098
Ընթացիկ ակտիվներ	14,244,216	11,366,316
Ընդամենը ակտիվներ	17,812,218	15,204,431

1. Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	31.12.24	30.09.25
Կապիտալ և պահուստներ		
Բաժնետիրական կապիտալ	1,212,750	1,220,450
Էմիսիոն եկամուտ	1,405,250	1,405,250
Պահուստային կապիտալ	188,310	181,913
Զբաղիչված շահույթ	2,471,789	2,017,465
Ընկերության սեփականատերերին վերագրելի սեփական կապիտալ	5,278,099	4,825,078
Զվերահսկվող բաժնեմաս	11,889	11,889
Ընդամենը սեփական կապիտալ	5,289,988	4,836,967
Պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	1,290,678	1,068,730
Վարձակալության գծով պարտավորություն	148,650	148,650
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	162,550	114,843
Ոչ ընթացիկ պարտավորություններ	1,601,878	1,332,223
Վարձակալության գծով պարտավորություն	84,196	37,920
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	10,590,202	8,876,837
Ընթացիկ հարկային պարտավորություններ	245,954	120,484
Ընթացիկ պարտավորություններ	10,920,352	9,035,241
Ընդամենը պարտավորություններ	12,522,230	10,367,464
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	17,812,218	15,204,431

2. Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	2024	2025 3-րդ կիս.
Հասույթ	10,335,029	7,583,018
Գործակալներին վճարված միջնորդավճարներ	(3,388,524)	(2,576,466)
Այլ եկամուտ	1,586,963	1,114,531
Անձնակազմի ծախսեր	(2,732,208)	(2,150,925)
Վարձակալության գծով ծախսեր	(569,317)	(553,023)
Մաշվածություն և ամորտիզացիա	(413,707)	(333,470)
Թույլտվության վճարներ	(313,536)	(405,871)
Ինկասացիոն ծառայություններ	(457,008)	(494,920)
Գովազդի և մարքեթինգի ծախսեր	(668,286)	(366,834)
Աջակցման և սպասարկման ծախսեր	(154,025)	(124,254)
Բանկային ծառայությունների վճարներ	(511,776)	(299,196)
Պարտքային կորուստների գծով ծախս/ծախսի հակադարձում	(64,421)	(10,442)
Այլ ծախսեր	(754,432)	(589,913)
Շահույթ գործառնական գործունեությունից	1,894,752	792,235
Ֆինանսական եկամուտ	444,860	395,675
Ֆինանսական ծախսեր	(289,648)	(97,494)
Զուտ ֆինանսական եկամուտ/ծախս	155,212	298,181
Շահույթ մինչև հարկերը	2,049,964	1,090,416
Շահութահարկի գծով ծախս	(453,322)	(238,992)
Տարվա շահույթ	1,596,642	851,424

3. Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Բաժնետիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Պահուստային կապիտալ	Զբաղիված շահույթ	Ընդամենը	Չվերահսկվող բաժնեմաս	Ընդամենը սեփական կապիտալ
2023 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,078,000	-	161,700	2,416,860	3,656,560	11,889	3,668,449
Տարվա շահույթ				1,596,642	1,596,642		1,596,642
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք				1,596,642	1,596,642		1,596,642
Սովորական բաժնետոմսերի թողարկում	134,750	1,405,250			1,540,000		1,540,000
Շահաբաժիններ*				(1,419,000)	(1,419,000)		(1,419,000)
Հատկացում պահուստին			20,213	(20,213)	-		-
Այլ օգտագործումներ				(96,103)	(96,103)		(96,103)
Գործարքներ սեփականատերերի հետ	134,750	1,405,250	20,213	(1,535,316)	24,897	-	24,897
2024 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,212,750	1,405,250	181,913	2,478,186	5,278,099	11,889	5,289,988
Տարվա շահույթ				539,939	539,939		539,939
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք				851,424	851,424		851,424
Սովորական բաժնետոմսերի թողարկում	7,700				7,700		7,700
Շահաբաժիններ*				(1,250,000)	(1,250,000)		(1,250,000)
Հատկացում պահուստին					-		-
Այլ օգտագործումներ				(62,145)	(62,145)		(62,145)
Գործարքներ սեփականատերերի հետ	-	-	-	(1,312,145)	(1,304,445)	-	(1,304,445)
2025 թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ	1,220,450	1,405,250	181,913	2,017,465	4,825,078	11,889	4,836,967

4. Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	2025 3-րդ եռ.-կ	2024
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված միջնորդավճարներ	7,421,961	10,112,095
Վճարված միջնորդավճարներ	(2,651,011)	(3,348,597)
Չուտ մուտքեր արտարժույթով գործառնություններից	1,011,476	1,495,447
Մուտքեր մատուցված այլ ծառայություններից	415,281	460,269
Ստացված այլ եկամուտ	66,502	50,497
Վճարումներ աշխատակիցներին	(2,195,334)	(2,718,767)
Այլ ծախսեր	(2,952,730)	(3,401,121)
Ստացված տոկոսներ	395,675	444,860
Դրամական միջոցների հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	1,511,821	3,094,683
(Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում		
Օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդներ	(210,538)	1,621,691
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	(233,873)	(516,609)
Պաշարների փոփոխություն	47,890	(70,977)
Կանխավճարների փոփոխություն	241,852	58,082
Ավելացում/(նվազում) գործառնական պարտավորություններում		-
Օպերատորներին վճարվելիք գումարներ	(1,562,387)	(1,828,394)
Գործակալների կողմից դեպոնացված միջոցներ	(47,707)	(99,575)
Այլ պարտավորություններ	(34,486)	80,629
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցների հոսքեր մինչև շահութահարկը	(287,429)	2,339,530
Շահութահարկի վճարում	(414,914)	(517,443)
Վճարված տոկոսներ	45,318	(129,513)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	(657,024)	1,692,574

4. Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	2025 3-րդ եռ.-կ	2024
Ներդրումային գործունեությունից ստացված դրամական միջոցների հոսքեր		
Մուտքեր հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառքից	-	18,526
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(551,901)	(655,881)
Ավանդի տեղաբաշխում	-	(162,000)
Ավանդի ելքագրում	-	162,033
Տրամադրված փոխառություններ	(139,064)	(45,288)
Տրամադրված փոխառությունների մարում	-	-
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(690,965)	(682,610)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարկերի և փոխառությունների մարում	(1,448,362)	(2,197,024)
Վարձակալության գծով պարտավորությունների դիմաց վճարումներ	(100,370)	(104,295)
Վճարված շահաբաժիններ	(83,972)	(31,019)
Մուտքեր բաժնետիրական կապիտալի թողարկումից	-	1,540,000
Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(1,632,704)	(792,338)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	(2,980,693)	217,626
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ տարվա սկզբում	7,915,646	7,902,100
Արժեզրկման պահուստում փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքներ վրա	(9,150)	(83,399)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	18,746	(120,681)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում	4,944,549	7,915,646

2025 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն 2025 թվականի երրորդ եռամսյակի ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են:

Գլխավոր հաշվապահ
Արթուր Թորոսյան



Պատասխանատու ֆինանսական հաշվետվությունների մասով

Գլխավոր տնօրեն
Արտյոմ Ղազարյան



Պատասխանատու ոչ ֆինանսական հաշվետվությունների մասով

14.11.2025թ.



Սույն հաշվետվությունը պարունակում է ապագային ուղղված հայտարարություններ, որոնք վերաբերում են գործառնական ծավալների ու ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ Շնկերության ընթացիկ սպասումներին և կանխատեսումներին: Այս հաշվետվության մեջ մենք ներկայացրել ենք մեր սպասումներն ու կանխատեսումները Շնկերության ապագա գործունեության վերաբերյալ, որոնք ենթակա են հայտնի և անհայտ ռիսկերի, անորոշությունների և այլ գործոնների, ինչի արդյունքում իրական արդյունքները կարող են զգալիորեն տարբերվել կանխատեսվածներից: Այդ գործոնները ներառում են, բայց չեն սահմանափակվում՝ տեխնոլոգիական փոփոխությունները, կարգավորող դաշտի զարգացումները, մրցակցային ճնշումը և սպառողական վարքագծի փոփոխությունները, որոնցից շատերը Շնկերության վերահսկողությունից դուրս են:

Ուստի՝ սույն փաստաթղթում ոչինչ չի կարող դիտարկվել որպես շահույթի երաշխիք կամ կանխատեսում:

Սույն հաշվետվության մեջ ներկայացված որոշ ֆինանսական տվյալներ հիմնված են Շնկերության ներքին կառավարչական հաշվառման վրա և չեն անցել անկախ աուդիտ:

Հնարավոր են էական տարբերություններ վերջնական աուդիտ անցած տարբերակի հետ: Թվային տվյալները կարող են ենթարկված լինել կլորացման, և, հետևաբար, որոշ աղյուսակներում և գրաֆիկներում ներկայացված հանրագումարները կարող են չհամապատասխանել դրանց բաղադրիչների ճշգրիտ թվաբանական գումարին:

TELCELL

Հակոբ Հակոբյան 3, հիմնական մասնաշենք, 1-ին սեկցիա, 3-րդ հարկ
info@telcell.am +374 60 272 222 +374 60 272 223
«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ գործունեությունը վերահսկում է ՀՀ ԿԲ-ն: